

ՃԵՆԱՎՐԱՊՆ ԵՒ ՃԵՆԱՎՐԱՊՆԱԿԱՆՆԵՐ

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀՈԳԵԻՈՐ-ԿՐԹԱԿԱՆ
ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՏԵՍՈՒՉ,
ԳԷՈՐԳԵԱՆ ՀՈԳԵԻՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐՈՅԵԱՆԻ
ՇՆՈՐՀԱԲՈՐԱԿԱՆ ԽՕՍՔԸ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԻՆ
ՆՈՒԻՐՈՒՄԾ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

(12 փետրուարի, 2015 թ.)

*«Եւ այս է յաղթութիւնն,
որ յաղթէ աշխարհի՝ հաւատքն մեր»*
(Ա. Յովհ. Է. 4):

Վեհափառ Տէր,
Հոգեւոր հայրեր,

Յարգարածան պրոռեկտոր Երեւանի պետական համալսարանի,
Սիրելի դասախօսներ, սաներ եւ հիւրեր,

Ողջունում եմ Ձեր ներկայութիւնը Գէորգեան հոգեւոր ճեմարանում՝ Ս. Վարդանանց նուիրում հանդիսաւոր միջոցառման առիթով: Արդեն վեցերորդ տարին է, որ ճեմարանի եւ Պետական համալսարանի համատեղ ջանքերով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ոգեկոչում ենք Աւարայրի նահատակների յիշատակը: Առանց վարանումի կարող ենք ասել, որ այս միջոցառումն անցնող տարիներին համաբուհական բնոյթ ստացաւ:

Պատահական չէ, որ հենց Մայր Աթոռ Ս. Էջմիածինն է ընտրուել իբրեւ միջոցառման վայր. այն ինքնին մի ներքին կապ է ստեղծում Աւարայրի խորհրդի եւ հայ ժողովրդի տեսլականի միջեւ: Մայր Աթոռն է այն արժէքների պահապանն ու սնուցանողը յանուն որոնց Վարդանանք յանձն առան իմացեալ մահը, նա է հայ ժողովրդի գիտակցութեան մէջ ամրապնդել այն ոգին, որ չկայ աւելի մեծ արժէք, քան ազատութիւնը: Այս է պատճառը, որ Առաքելական Եկեղեցու հայրերն Էջմիածինը բնորոշել են որպէս Լուսոյ Խորան:

Վաղնչական ժամանակներից ի վեր մարդկության պատմությունը մշտապես ողողում է եղել արեամբ եւ պատերազմներով: Ժողովուրդներն ու պետությունները կռուել ու պայքարել են անդադար՝ հողերի, ծովերի, գետերի ու նեղուցների, կղզիների համար: Փորձել են յափշտակել ուրիշի ունեցումը ու հարստությունը, ձգտել են տիրանալ բնական պաշարներին, գանձարանի ոսկուն, արծաթին... Ու թէեւ իրողությունների հոսանքում մի կողմը նախաշարձակ է, իսկ միւսը՝ պաշտպանուող, իրականում երկու կողմն էլ ձգտում են բարեկեցիկ կեանքի. ունենալ, պահպանել, իսկ հնարաւորութեան դէպքում ընդլայնել տարածքները, բազմապատկել հարստությունը...

Այլ էր հայոց պարագան, երբ 451-ին եւան պարսից բանակների դէմ. ո՛չ հողի կորուստն էր սպառնում մեզ, ո՛չ գանձարանի աւարառությունը, այլ թշնամին մտադրուել էր մեզ գրկել երկնային հարստությունից՝ հաւատից: Եւ այս էր պատճառը, որ այլեւս ոչ ոք ի նկատի չէր առնում թշնամու սպառազինությունն ու քանակը: Նա, ով իր խաղաղ տունն ու ամրոցը թողնելով՝ գալիս էր Աւարայրի դաշտ, գալիս էր առ Աստուած հաւատքով տոգորուած, եւ այլեւս կարեւոր չէր գէնքն ու զօրքը, որովհետեւ չկայ այնպիսի ուժ, գէնք ու երկրային իշխանություն, որ մօտենայ հաւատքի զօրութեանը: Այդ ամէնն այլեւս երկրորդական էր, որովհետեւ Տղմուտի ափին բանակած իւրաքանչիւր հայորդի կարող էր պարզապէս երկինք կարկառել ձեռքերը եւ կատարեալ հաւատքով ու վստահութեամբ բացականչել առ Աստուած. *«Ի Զէն է յաղթութիւն, եւ ի Զէն է իմաստութիւն»* (Ա. Եզր. Դ. 59):

Եւ իրօք, Աստուած պարգեւեց մեզ այդ յաղթությունը, որ սկիզբը պիտի լինէր բոլոր յաջորդող յաղթանակների, որոնք տօնեցինք մեր անսահման հաւատի շնորհիւ ու հաւատքի ուժով պարտութեան մատնեցինք բոլոր թշնամիներին... Աւարայրի հերոսների սերունդները հպարտութեամբ կարող են կրկնել առաքելական խօսքերը, որ վստահաբար եղել են իրենց պապերի շուրթերին. *«Եւ այս է յաղթութիւնն, որ յաղթէ աշխարհի՝ հաւատքն մեր»* (Ա. Յովհ. Է. 4):

Վեհափառ Տէր, օգտուելով այս բարեպատեհ առիթից, յանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ Հոգեւոր-կրթական բարձրագոյն հաստատությունների, շնորհաւորում եմ Ձերդ Սրբութեանն անուանակոչութեան տօնի առիթով, մաղթում, որ միշտ վառ պահէք հայ ժողովրդի մէջ Վարդանանց յաղթական շունչը եւ Լուսոյ Խորան Սուրբ Էջմիածինը փայլակնաձեւ շողարձակի համայն հայութեան համար: